

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի մարտի 11-ի 2002/15/ԵՀ հրահանգ

**Ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող
անձանց աշխատանքային ժամանակը կազմակերպելու մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ,
մասնավորապես, դրա 71-րդ եւ 137(2) հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը(1),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան (3) եւ
Համաձայնեցման կոմիտեի կողմից 2002 թվականի հունվարի 16-ին հաստատված համատեղ
տեքստի համաձայն,

Քանի որ

1) «Ավտոճանապարհային տրանսպորտին վերաբերող որոշակի սոցիալական օրենսդրության
ներդաշնակեցման մասին» Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3820/85
կանոնակարգում (ԵՏՀ) վարորդների համար սահմանվում են ընդհանուր կանոններ՝ վարելու
համար նախատեսված ժամերի եւ հանգստի ժամանակահատվածների մասին. այդ կանոնակարգը
չի ընդգրկում ավտոճանապարհային տրանսպորտի աշխատանքային ժամանակին առնչվող մյուս
ասպեկտները,

2) «Աշխատանքային ժամանակի կազմակերպման որոշ ասպեկտների մասին» Խորհրդի 1993
թվականի նոյեմբերի 23-ի 93/104/ԵՀ հրահանգը (5) հնարավորություն է տալիս աշխատանքի
ժամանակի կազմակերպման համար ընդունել ավելի որոշակի պահանջներ: Հաշվի առնելով սույն
Հրահանգի ոլորտային բնույթը՝ դրա դրույթները գերակայում են 93/104/ԵՀ հրահանգի նկատմամբ՝
վերջինիս 14-րդ հոդվածի ուժով,

3) Չնայած սոցիալական գործընկերների միջեւ ընթացող լարված բանակցություններին՝ հնարավոր
չի եղել համաձայնության գալ ավտոճանապարհային տրանսպորտի ոլորտում շրջիկ բնույթի
աշխատանք կատարող աշխատողների առարկայի շուրջ,

4) հետեւաբար, անհրաժեշտ է սահմանել մի շարք ավելի կոնկրետ դրույթներ ավտոճանապարհային տրանսպորտի ոլորտում աշխատանքի ժամերի վերաբերյալ, որոնք նպատակաուղղված կլինեն տրանսպորտի անվտանգության եւ դրանցում ընդգրկված անձանց առողջության եւ անվտանգության ապահովմանը,

5) քանի որ առաջարկված գործողության նպատակները չեն կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից եւ, հետեւաբար, առաջարկվող գործողության ծավալից եւ ազդեցությունից ելնելով, այն կարող է ավելի լավ իրագործվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածում նշված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Հրահանգը չի անցնում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ շրջանակը,

6) սույն Հրահանգի գործողության ոլորտն ընդգրկում է անդամ պետությունում հիմնադրված տրանսպորտային ընկերությունների կողմից աշխատանքի վերցված միայն շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողներին, ովքեր ներգրավված են ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներում, որոնք կարգավորվում են թիվ 3820/85 կանոնակարգով (ԵՏՀ) կամ, վերջինիս բացակայության դեպքում՝ «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին (AETR)» Եվրոպական համաձայնագրով,

7) պետք է հստակեցվի, որ շրջիկ բնույթի աշխատանք կատարող այն աշխատողները, որոնք դուրս են մնում սույն Հրահանգի գործողության ոլորտից, բացառությամբ ինքնազբաղ վարորդների, օգտվում են 93/104/ԵՀ հրահանգով նախատեսված հիմնական պաշտպանությունից, Այդ հիմնական պաշտպանությունը ներառում է բավարար հանգստի վերաբերյալ գործող կանոնները, առավելագույն միջին աշխատանքային շաբաթը, ամենամյա արձակուրդը եւ որոշ հիմնական դրույթներ գիշերային ժամերին աշխատողների համար՝ ներառյալ նրանց առողջական վիճակը գնահատելը,

8) քանի որ ինքնազբաղ վարորդներն ընդգրկված են թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) գործողության ոլորտում, սակայն դուրս են մնացել 93/104/ԵՀ հրահանգի գործողության ոլորտից, ապա նրանք պետք է ժամանակավորապես դուրս մնան սույն Հրահանգի գործողության ոլորտից՝ 2(1) հոդվածի դրույթների համաձայն,

9) սույն Հրահանգում օգտագործված սահմանումները չպետք է նախադեպ լինեն աշխատանքային ժամանակի մասին Համայնքի այլ կանոնակարգերի համար,

10) ճանապարհային երթեւեկության անվտանգությունը բարելավելու, մրցակցության խաթարումը կանխելու եւ սույն Հրահանգով նախատեսված շրջիկ բնույթի աշխատանք կատարող

աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու նպատակով՝ վերջիններս պետք է ճշգրիտ կերպով իմանան, թե ավտոճանապարհային փոխադրումների աշխատանքներին տրամադրված ժամանակահատվածից որն է համարվում աշխատանքային եւ որը՝ ոչ աշխատանքային ժամանակ եւ, որը, հետեւաբար, համարվում է ընդմիջման ժամ հանգստի ժամ կամ հասանելիության ժամանակահատված: Աշխատողներին պետք է հատկացվեն հանգստի ամենօրյա եւ ամենշաբաթյա նվազագույն ժամանակահատվածներ եւ բավարար ընդմիջումներ, Անհրաժեշտ է նաեւ սահմանել շաբաթական աշխատանքային ժամերի թույլատրելի սահմանաչափը,

11) ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մարդու մարմինը գիշերային ժամերին առավել զգայուն է շրջակա միջավայրի խաթարումների, ինչպես նաեւ աշխատանքի կազմակերպման որոշ ծանրաբեռնող ձեւերի նկատմամբ, եւ որ գիշերային աշխատանքի երկարատեւ ժամանակահատվածները կարող են վնասակար ազդեցություն ունենալ աշխատողների առողջության վրա եւ կարող են վտանգել նրանց անվտանգությունն ու ճանապարհային երթեւեկության անվտանգությունն առհասարակ,

12) արդյունքում, անհրաժեշտ է սահմանափակել գիշերային աշխատանքի ժամանակահատվածների տեւողությունը եւ ապահովել, որ այն պրոֆեսիոնալ վարորդները, ովքեր աշխատում են գիշերային ժամերին, ստանան համապատասխան փոխհատուցում իրենց կատարած աշխատանքի համար եւ չգրկվեն վերապատրաստման հետ կապված հնարավորություններից,

13) գործատուները պետք է վարեն գրանցամատյան՝ գրառելով այն բոլոր դեպքերը, երբ գերազանցվել է շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողների համար կիրառելի առավելագույն միջին աշխատանքային շաբաթը,

14) «Ուղեւորների միջազգային եւ ազգային փոխադրումներ իրականացնելիս վարելու ժամանակի մասին» թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) դրույթները, բացառությամբ կանոնավոր փոխադրումների, պետք է շարունակեն կիրառվել,

15) Հանձնաժողովը պետք է դիտանցի սույն Հրահանգի իրականացումը եւ այս ոլորտում տեղի ունեցող զարգացումները անդամ պետություններում ու Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ, Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտե ու Տարածաշրջանային հարցերով կոմիտե ներկայացնի հաշվետվություն՝ կանոնների կիրառության եւ գիշերային աշխատանքի մասին դրույթների կիրառության հետեւանքների վերաբերյալ,

16) Ելնելով հանգամանքներից՝ անհրաժեշտ է ապահովել անդամ պետությունների կամ աշխատողների եւ գործատուների կողմից որոշ դրույթներից շեղումներ կատարելու հնարավորությունը: Որպես կանոն՝ շեղում կատարելու դեպքում, համապատասխան աշխատողներին, որպես փոխհատուցում, պետք է հատկացվեն հանգստի ժամանակահատվածներ,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Նպատակը

Սույն Հրահանգի նպատակը աշխատանքային ժամանակի կազմակերպման վերաբերյալ նվազագույն պահանջներ սահմանելն է՝ ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձանց առողջությունը եւ անվտանգությունն ու ճանապարհային երթեւեկության անվտանգությունը բարելավելու նպատակով, ինչպես նաեւ ապահովել մրցակցության պայմանների համապատասխանությունը:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգը կիրառվում է անդամ պետությունում հիմնադրված տրանսպորտային ընկերությունների կողմից աշխատանքի վերցված շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողների նկատմամբ, ովքեր ներգրավված են ավտոճանապարհային փոխադրումների գործողություններում, որոնք կարգավորվում են թիվ 3820/85 կանոնակարգով (ԵՏՀ), կամ, վերջինիս բացակայության դեպքում՝ «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին (AETR)» համաձայնագրով»:

Առանց հակասելու հետեւյալ ենթապարբերության դրույթներին՝ սույն Հրահանգը կիրառվում է ինքնազբաղ վարորդների նկատմամբ՝ սկսած 2009 թվականի մարտի 23-ից:

Ամենաուշը այս ամսաթվից երկու տարի առաջ Հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ: Այս հաշվետվության մեջ ներառվում է վերլուծություն Հրահանգի գործողության ոլորտից ինքնազբաղ վարորդներին բացառելու հետեւանքների մասին՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության, մրցակցության պայմանների, մասնագիտության բնույթի, ինչպես նաեւ սոցիալական ասպեկտների առումներով: Պետք է հաշվի առնվեն տրանսպորտային համակարգի կառուցվածքի եւ ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում աշխատանքային միջավայրի հետ կապված յուրաքանչյուր անդամ պետությունում առկա հանգամանքները: Այս հաշվետվության հիման վրա Հանձնաժողովը ներկայացնում է առաջարկ, որի նպատակը, ըստ անհրաժեշտության, կարող է լինել կամ՝

– ինքնազբաղ վարորդներին սույն Հրահանգի գործողության ոլորտում ընդգրկելու եղանակների սահմանումը՝ կապված առանձին ինքնազբաղ վարորդների հետ, ովքեր մյուս անդամ երկրներում ներգրավված չեն ավտոճանապարհային փոխադրումների աշխատանքներում եւ ովքեր, օբյեկտիվ

պատճառներով, ենթարկվում են այնպիսի տեղական սահմանափակումների, ինչպես, օրինակ՝ ծայրամասային վայրերը, երկար ներքին ճանապարհները եւ առանձնահատուկ մրցակցային միջավայրը, կամ՝

– ինքնազբաղ վարորդներին սույն Հրահանգի գործողության ոլորտում չընդգրկելը:

2. 93/104/ԵՀ հրահանգի դրույթները կիրառվում են սույն Հրահանգի գործողության ոլորտից դուրս մնացած շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողների նկատմամբ:

3. Այնքանով, որքանով սույն Հրահանգը պարունակում է ավելի կոնկրետ դրույթներ շրջիկ բնույթի ավտոճանապարհային փոխադրումների աշխատանքներ կատարող աշխատողների վերաբերյալ, այն, 93/104/ԵՀ հրահանգի 14–րդ հոդվածի համաձայն, գերակայում է տվյալ հրահանգի դրույթների նկատմամբ: 4. Սույն Հրահանգը լրացնում է թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) եւ, անհրաժեշտության դեպքում, «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին (AETR)» համաձայնագրի դրույթները, որոնք գերակայում են սույն Հրահանգի դրույթների նկատմամբ:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով՝

ա) «աշխատանքային ժամանակ» նշանակում է՝

1. շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողների դեպքում՝ աշխատանքի սկզբից մինչեւ վերջն ընկած ժամանակը, որի ընթացքում շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողը գտնվում է իր աշխատատեղում՝ գործատուի տրամադրության տակ եւ կատարում է իր գործառույթները կամ աշխատանքները, այսինքն՝

– ավտոճանապարհային փոխադրումների բոլոր աշխատանքների կատարման համար հատկացված ժամանակը: Այս աշխատանքները, մասնավորապես, ներառում են հետեւյալը.

i) փոխադրամիջոցը վարելը,

ii) բեռնելը եւ բեռնաթափելը,

iii) ուղեւորներին փոխադրամիջոց բարձրանալիս եւ դրանից ցած իջնելիս օգնելը,

iv) փոխադրամիջոցը մաքրելը եւ տեխնիկական սպասարկումն ապահովելը,

v) փոխադրամիջոցի, դրանում գտնվող բեռների եւ ուղեւորների անվտանգությունն ապահովելուն կամ իրականացվող փոխադրման կոնկրետ աշխատանքի հետ ուղղակիորեն կապված իրավական

կամ նորմատիվ պարտավորությունների կատարմանն ուղղված բոլոր մյուս աշխատանքները՝ ներառյալ բեռնման եւ բեռնաթափման դիտանցումը, ոստիկանության, մաքսային, ներգաղթի հարցերով պաշտոնյաների հետ վարչական ձեւակերպումների կատարումը եւ այլն,

- այն ժամանակը, որի ընթացքում նա չի կարող ազատորեն տնօրինել իր ժամանակը եւ պետք է գտնվի իր աշխատատեղում, պատրաստ՝ սկսելու իր սովորական աշխատանքի կատարումը՝ ներառյալ հարթապահ լինելու հետ կապված որոշակի առաջադրանքների կատարումը, մասնավորապես, բեռնելուն եւ բեռնաթափելուն սպասելու ժամանակահատվածների ընթացքում, երբ կանխատեսելի տեւողությունը նախապես հայտնի չէ, այսինքն, մինչեւ մեկնումը կամ տվյալ ժամանակահատվածը փաստացի սկսվելուց անմիջապես առաջ, կամ սոցիալական գործընկերների միջեւ բանակցված ընդհանուր պայմանների եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրության դրույթների համաձայն,

2. ինքնազբաղ վարորդների դեպքում՝ նույն սահմանումները կիրառվում են աշխատանքի սկզբից մինչեւ վերջն ընկած ժամանակի համար, որի ընթացքում ինքնազբաղ վարորդը գտնվում է իր աշխատատեղում՝ պատվիրատուի տրամադրության տակ եւ կատարում է իր գործառույթները կամ աշխատանքները՝ բացառությամբ վարչական աշխատանքի, որն ուղղակիորեն կապ չունի կատարվող փոխադրման կոնկրետ գործողության հետ:

5-րդ հոդվածում նշված ընդմիջման ժամանակը, 6-րդ հոդվածում նշված հանգստի ժամանակը եւ, չհակասելով անդամ պետությունների օրենսդրությանը կամ սոցիալական գործընկերների միջեւ կնքված համաձայնագրերին, որոնցով նախատեսվում է, որ նման ժամանակահատվածները պետք է փոխհատուցվեն կամ սահմանափակվեն, սույն հոդվածի բ) կետում նշված հասանելիության ժամանակահատվածները չեն ներառվում աշխատանքային ժամանակի մեջ,

բ) «հասանելիության ժամանակահատվածներ» նշանակում է՝

- ժամանակահատվածներ՝ բացառությամբ ընդմիջումների եւ հանգստի ժամանակի հետ կապված ժամանակահատվածների, որոնց ընթացքում շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողից չի պահանջվում մնալ իր աշխատատեղում. սակայն նա պետք է հասանելի լինի՝ արձագանքելու վարելը կամ այլ աշխատանք կատարելը վերսկսելու պահանջին: Նման հասանելիության ժամանակահատվածները, մասնավորապես, ներառում են այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողն ուղեկցում է լաստանավով կամ գնացքով տեղափոխվող փոխադրամիջոցին, ինչպես նաեւ սահմանների մոտ եւ երթեւեկության արգելքների պատճառով սպասելու ժամանակահատվածները:

Այս ժամանակահատվածները եւ դրանց կանխատեսելի տեւողությունը շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողին հայտնի են դառնում նախապես, այսինքն, կամ մինչեւ մեկնումը, կամ տվյալ ժամանակահատվածը փաստացի սկսվելուց անմիջապես առաջ, կամ՝ սոցիալական գործընկերների

միջեւ բանակցված ընդհանուր պայմանների եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրության պայմանների համաձայն,

-թիմում շրջիկ բնույթի վարորդական աշխատանք կատարող աշխատողների համար՝ փոխադրամիջոցը շարժման մեջ գտնվելու ընթացքում վարորդի կողքին կամ շարժական նստարանի վրա նստելու ընթացքում ծախսված ժամանակը,

գ) «աշխատատեղ» նշանակում է՝

- այն ընկերության բիզնեսի հիմնական տարածքի գտնվելու վայրը, որի համար ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձն իրականացնում է իր պարտականությունները՝ ներառյալ այդ ընկերության տարբեր դուստր ձեռնարկությունների բիզնեսի տարածքները՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք տեղակայված են իրենց կենտրոնական գրասենյակի հետ միեւնույն վայրում կամ բիզնեսի հիմնական տարածքում, թե ոչ,

- ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձի կողմից՝ իր պարտականությունները կատարելիս օգտագործվող փոխադրամիջոցը եւ

- որեւէ այլ վայր, որտեղ կատարվում են փոխադրման հետ կապված աշխատանքներ,

դ) «շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատող» նշանակում է ցանկացած աշխատող, որը շրջագայող աշխատակազմի անդամ է՝ ներառյալ վերապատրաստվող եւ սկսնակ աշխատողները, ովքեր աշխատում են ընկերությունում, որը տրամադրում է ուղեւորների եւ ապրանքների ավտոճանապարհային փոխադրման ծառայություններ՝ որպես վարձու աշխատող կամ վարձատրության դիմաց կամ իր իսկ միջոցներով,

ե) «ինքնազբաղ վարորդ» նշանակում է՝ ցանկացած անձ, ում հիմնական աշխատանքը ուղեւորների եւ ապրանքների ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնելն է՝ որպես վարձու աշխատող, կամ վարձատրության դիմաց՝ Համայնքի օրենսդրության իմաստով՝ վերոնշյալ փոխադրումներն իրականացնելու համար Համայնքի վկայականի կամ որեւէ այլ մասնագիտական թույլտվության հիման վրա, ով իրավունք ունի աշխատելու ինքն իր համար եւ ով աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքային աստիճանակարգային հարաբերությունների որեւէ այլ ձեւով կապված չէ որեւէ գործատուի հետ, ով ազատ է՝ կազմակերպելու իր համապատասխան աշխատանքային գործողությունները, ում եկամուտն ուղղակիորեն կախված է ստացված շահույթից եւ ով ազատ է՝ առանձին կամ ինքնազբաղ վարորդների հետ համագործակցությամբ մի քանի պատվիրատուների հետ առեւտրային հարաբերությունների մեջ մտնելու համար:

Սույն Հրահանգի նպատակների համար այն վարորդները, ովքեր չեն բավարարում այս չափանիշները, կրում են սույն Հրահանգով շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողների

համար նախատեսված նույն պարտավորությունները եւ օգտվում են վերջիններիս համար նախատեսված նույն իրավունքներից,

գ) «ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձ» նշանակում է շրջիկ բնույթի աշխատանք կատարող ցանկացած աշխատող կամ ինքնազբաղ վարորդ, ով նման աշխատանքներ է կատարում,

է) «շաբաթ» նշանակում է երկուշաբթի օրվա ժամը 00.00-ից մինչեւ կիրակի օրվա ժամը 24.00-ն ընկած ժամանակահատվածը,

ը) «գիշերային ժամանակ» նշանակում է ազգային օրենսդրությամբ սահմանված՝ ժամը 00.00-ից մինչեւ ժամը 07.00-ն ընկած՝ առնվազն չորս ժամ տեւողությամբ ժամանակահատվածը,

թ) «գիշերային աշխատանք» նշանակում է գիշերային ժամանակի ընթացքում կատարված ցանկացած աշխատանք:

Հոդված 4

Շաբաթական առավելագույն աշխատանքային ժամանակը

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ.

ա) շաբաթական միջին աշխատանքային ժամանակը չգերազանցող 48 ժամը: Շաբաթական առավելագույն աշխատանքային ժամանակը կարող է ձգվել մինչեւ 60 ժամը միայն այն դեպքում, երբ չորս ամիսների ընթացքում չի գերազանցվում շաբաթական միջին 48 ժամը: Թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 6(1) հոդվածի չորրորդ եւ հինգերորդ ենթապարբերությունները կամ, անհրաժեշտության դեպքում, «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին (AETR)» համաձայնագրի հոդված 6(1)-ի չորրորդ ենթապարբերությունը գերակայում է սույն Հրահանգի նկատմամբ՝ այնքանով, որքանով համապատասխան վարորդները չորս ամսվա ընթացքում չեն գերազանցում աշխատանքային ժամանակի համար սահմանված միջին շաբաթական 48 ժամը,

բ) տարբեր գործատուների համար ծախսված աշխատանքային ժամանակը որոշվում է աշխատանքային ժամերի հանրագումարով, Գործատուն շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող տվյալ աշխատողին գրավոր խնդրում է հաշվետվություն ներկայացնել իրեն մեկ այլ գործատուի համար աշխատած ժամանակի մասին: Շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող աշխատողն այդ տեղեկությունները գրավոր է տրամադրում:

Հոդված 5

Ընդմիջումները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ, չհակասելով թիվ 3820/85 կանոնակարգով (ԵՏՀ) նախատեսվող պաշտպանությանը կամ, վերջինիս բացակայության դեպքում՝ «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին (AETR)» համաձայնագրին, ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձինք, չհակասելով 2(1) հոդվածին, ոչ մի պարագայում առանց ընդմիջման չաշխատեն ավելի քան վեց հաջորդական ժամ: Աշխատանքային ժամանակն ընդհատվում է առնվազն 30 րոպե տեւողությամբ ընդմիջմամբ, եթե աշխատանքային ժամերի ընդհանուր թիվը կազմում է վեցից ինը ժամ եւ առնվազն 45 րոպե տեւողությամբ ընդմիջմամբ, եթե աշխատանքային ժամերի ընդհանուր տեւողությունը կազմում է ավելի քան ինը ժամ:

2. Ընդմիջումները կարող են բաժանվել առնվազն 15 րոպե տեւողությամբ ժամանակահատվածների:

Հոդված 6

Հանգստի ժամանակահատվածները

Սույն Հրահանգի նպատակներով՝ սկսնակ եւ վերապատրաստվող աշխատողների նկատմամբ կիրառվում են հանգստի ժամանակի վերաբերյալ սույն դրույթները, ինչ շրջիկ բնույթի աշխատանք կատարող մյուս աշխատողների նկատմամբ՝ համաձայն թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) կամ, վերջինիս բացակայության դեպքում՝ «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին (AETR)» համաձայնագրի:

Հոդված 7

Գիշերային աշխատանք

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ.

– գիշերային աշխատանք կատարելու դեպքում աշխատանքային ժամանակը յուրաքանչյուր 24 ժամ ժամանակահատվածի ընթացքում չգերազանցի տասը ժամը,

– գիշերային աշխատանքի դիմաց տրամադրվի փոխհատուցում՝ համաձայն ազգային օրենսդրական ակտերի, կոլեկտիվ պայմանագրերի, աշխատողների եւ գործատուների միջեւ

կնքված համաձայնագրերի կամ ազգային գործելակերպի՝ պայմանով, որ նման փոխհատուցումը միտում չունենա վտանգելու ճանապարհային երթեւեկության անվտանգությունը:

2. Մինչեւ 2007 թվականի մարտի 23-ը, Հանձնաժողովը, 13(2) հոդվածի համաձայն, իր կողմից կազմված հաշվետվության շրջանակներում գնահատում է վերոնշյալ 1-ին պարբերությունում սահմանված դրույթների հետեւանքները: Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, այդ հաշվետվության հետ միասին ներկայացնում է համապատասխան առաջարկներ:

3. Հանձնաժողովը ներկայացնում է հրահանգի առաջարկ, որը պարունակում է դրույթներ՝ կապված պրոֆեսիոնալ վարորդների վերապատրաստման հետ՝ ներառյալ այն անձինք, ովքեր կատարում են գիշերային աշխատանք, եւ որով սահմանվում են նման վերապատրաստման ընդհանուր սկզբունքները:

Հոդված 8

Շեղումները

1. Օբյեկտիվ կամ տեխնիկական պատճառներով կամ աշխատանքի կազմակերպման հետ կապված պատճառներով 4-րդ եւ 7-րդ հոդվածներից շեղումները կարող են ընդունվել կոլեկտիվ պայմանագրերի, սոցիալական գործընկերների միջեւ կնքված համաձայնագրերի կամ, եթե դա հնարավոր չէ, օրենքների, կանոնակարգերի կամ վարչական ակտերի միջոցով՝ տվյալ գործատուների եւ աշխատողների ներկայացուցիչների խորհրդատվության առկայության պայմաններում եւ պայմանով, որ ջանքեր գործադրվեն՝ ուղղված սոցիալական երկխոսության բոլոր համապատասխան ձևերի խրախուսմանը:

2. 4-րդ հոդվածից շեղում կատարելու ընտրության արդյունքում կարող է չսահմանվել վեց ամիսը գերազանցող բազային ժամանակահատված՝ քառասունութ ժամ կազմող շաբաթական միջին առավելագույն աշխատանքային ժամանակը հաշվարկելու համար:

Հոդված 9

Տեղեկություններ եւ գրանցումներ

Անդամ պետություններն ապահովում են, որ.

ա) շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողները տեղեկացվեն համապատասխան ազգային պահանջների, ընկերության ներքին կանոնների, աշխատողների եւ գործատուների միջեւ կնքված համաձայնագրերի, մասնավորապես՝ կոլեկտիվ պայմանագրերի եւ ընկերության՝ սույն Հրահանգի հիման վրա կնքած բոլոր համաձայնագրերի մասին՝ չհակասելով «Աշխատանքային

պայմանագրի կամ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ կիրառվող պայմանների մասին աշխատողներին տեղեկացնելու գործատուի պարտավորության մասին» Խորհրդի 1991 թվականի հոկտեմբերի 14-ի 91/533/ԵՏՀ հրահանգին (6),

բ) չհակասելով 2(1) հոդվածին, ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձանց աշխատանքային ժամանակը գրանցվի: Գրանցումները պահպանվում են նշված ժամանակահատվածի ավարտից հետո առնվազն երկու տարվա ընթացքում: Գործատուները պատասխանատու են շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողների աշխատանքային ժամանակը գրանցելու համար: Գործատուները, պահանջի դեպքում, շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողներին են տրամադրում նրանց աշխատած ժամերի մասին գրանցումների պատճենները:

Հոդված 10

Առավել նպաստավոր դրույթները

Սույն Հրահանգը չի ազդում անդամ պետությունների՝ ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձանց առողջության եւ անվտանգության ապահովման համար առավել նպաստավոր օրենքներ, կանոնակարգեր կամ վարչական ակտեր կիրառելու կամ ներդնելու իրավունքի վրա, կամ կնքված այնպիսի կոլեկտիվ պայմանագրերի կամ աշխատողների եւ գործատուների միջեւ կնքված այլ համաձայնագրերի կիրառությունը դյուրացնելու կամ թույլատրելու նրանց իրավունքի վրա, որոնք առավել նպաստավոր են՝ ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձանց առողջության եւ անվտանգության ապահովման համար: Սույն Հրահանգի իրականացումը վավերական հիմքեր չի ներկայացնում 2(1) հոդվածում նշված աշխատողներին տրամադրվող պաշտպանության ընդհանուր մակարդակն իջեցնելու համար:

Հոդված 11

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սահմանում են պատժամիջոցների համակարգ՝ սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային նորմերի խախտման դեպքում եւ ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ այդ պատժամիջոցների կիրառումն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք եւ տարհամոզիչ:

Հոդված 12

Երրորդ երկրների հետ բանակցությունները

Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո Համայնքը բանակցություններ է սկսում համապատասխան երրորդ երկրների հետ՝ երրորդ երկրում հիմնադրված տրանսպորտային ընկերությունների կողմից աշխատանքի վերցված շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողների նկատմամբ սույն Հրահանգում սահմանված կանոններին համարժեք կանոնների կիրառությունն ապահովելու նպատակով:

Հոդված 13

Հաշվետվությունները

1. Անդամ պետությունները, յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, Հանձնաժողով հաշվետվություն են ներկայացնում սույն Հրահանգի իրականացման մասին՝ նշելով գործատուների եւ աշխատողների տեսակետները: Հաշվետվությունը պետք է Հանձնաժողով ներկայացվի սեպտեմբերի 30-ից ոչ ուշ՝ հաշվետվության մեջ ընդգրկված երկամյա ժամանակահատվածը լրանալու օրվանից հետո: Երկամյա ժամանակահատվածը նույնն է, ինչ թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 16(2) հոդվածում նշված ժամանակահատվածը:

2. Հանձնաժողովը, յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, կազմում է հաշվետվություն՝ անդամ պետությունների կողմից սույն Հրահանգի իրականացման եւ տվյալ ոլորտում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ: Հանձնաժողովն այս հաշվետվությունն ուղարկում է Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ, Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտե ու Տարածաշրջանային հարցերով կոմիտե:

Հոդված 14

Եզրափակիչ դրույթները

1. Անդամ պետությունները մինչեւ 2005 թվականի մարտի 23-ն ընդունում են սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր եւ վարչական ակտեր կամ մինչեւ այդ ամսաթիվն ապահովում են, որ աշխատողները եւ գործատուները համաձայնության գան սահմանված անհրաժեշտ միջոցների շուրջ, մինչդեռ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ քայլերը՝ նրանց թույլ տալով ցանկացած պահի հնարավորություն ունենալ՝ ապահովելու համար սույն Հրահանգով պահանջվող արդյունքները:

Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին ենթապարբերությամբ նշված միջոցները, դրանք պետք է սույն հրահանգին կատարվող հղում պարունակեն կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք արդեն ընդունել են կամ ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում, որ շրջիկ բնույթի աշխատանք կատարող աշխատողներ ունեցող բեռնառաքողները, բեռնափոխադրողները, հիմնական կատարողները եւ ձեռնարկությունները համապատասխանեն սույն Հրահանգի համապատասխան դրույթներին:

Հոդված 15

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

Հոդված 16

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2002 թվականի մարտի 11-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Պ. Քոքս

Խորհրդի կողմից՝

Նախագահ Զ. Պիքեյ ի Քամիս

1) ՊՏ C 43, 17.02.1999թ., էջ 4:

2) ՊՏ C 138, 18.05.1999թ., էջ 33:

3) Եվրոպական պառլամենտի 1999 թվականի ապրիլի 14-ի եզրակացություն (ՊՏ C 219, 30.07.1999թ., էջ 235)՝ հաստատված 1999 թվականի մայիսի 6-ին (ՊՏ C 279, 01.10.1999թ., էջ 270),

Խորհրդի 2001 թվականի մարտի 23-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 142, 15.05.2001թ., էջ 24) եւ Եվրոպական պառլամենտի 2001 թվականի հունիսի 14-ի որոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում): Եվրոպական պառլամենտի 2002 թվականի փետրվարի 5-ի որոշում եւ Խորհրդի 2002 թվականի փետրվարի 18-ի որոշում:

4) ՊՏ L 370, 31.12.1985թ., էջ 1:

5) ՊՏ L 307, 13.12.1993թ.. էջ 18: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2000/34/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 195, 01.08.2000թ., էջ 41):

6) ՊՏ L 288, 18.10.1991թ., էջ 32: